

	Էջ	P.
Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ. — Աիշան	321	P. L. Dayan. — Le P. Alishan.
Հ. Կ. Ա. — Հ. Աիշան « Բնի եղև- նիս »	324	P. G. A. — P. Alishan et ses Médi- tations à l'ombre du sapin
Հ. Վ. Յովհաննէսեան. — Աիշանի նկա- րին առջև	328	P. V. Horhannessian. — Devant le portrait du P. Alishan (poésie)
Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ. — Հ. Աիշան առ իւր աշակերտս	329	P. L. Dayan. — P. Alishan à ses élèves
ԱՐՄԵՆ - ԻՐԿԱՐ. — Գերեզման Բանաստեղծ Աիշանի	336	Arsène Yérgath. — Le tombeau du Poète P. Alishan (poésie)
Հ. Վ. ՀՅԱՌԵՆԻ. — Հ. Աիշանի հետ	337	P. V. Hatzouni. — P. Alishan intime (Souvenirs)
Հ. Ե. ՓԵՆԵԿԵԱՆ. — Արձանագիր Աիշա- նի շիրմին	343	P. E. Paitchikian. — L'építaphe du tombeau du P. Alishan (poésie)
Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ. — Հ. Աիշան ու Մե- ղուածաղիկ	345	P. L. Dayan. — P. Alishan et le cérinthe
ԽՍՐ. — Աիշանի համակիր Հայաստէրի մը մահը	347	Réd. — La mort d'un Arménophile ami du P. Alishan
Հ. Ղ. Տ. — Յուր խոսքը Հ. Ղ. Աիշանի	348	P. L. D. — L'âme du P. Alishan re- flétée dans ses écrits

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՏԱՐԻՍԵՆԵ ԶԱՏԵ ՄԸ ԱՌ Հ. ԱՒԵԱՆ. — Պարս-
կաստեմէն Պ. Հայկ ԱձԻՄ. անէ առ խորագրու-
րիւն հասած նամակէն կը հրատարակենք հա-
մոյքով հետեւեալ գործիչի տողերը.

« Աւարայրի Բլուրին, Աման Հայր Աիշա-
նին՝ իմ մեծարանքն ու յարգանքը կը մատու-
ցանեմ՝ պաշտամունքիս և երախտագիտութեանս
հետ, աղաչելով, որ Լուսանորոգն Միթարայ
տան պատկառելի Հայրերը, իմ այս համառոտ
բայց ջերմիկ տողերս համարին ծաղկեփունջ
մը՝ Հայոց Ախարհէն քաղուած, և թող համ-
բոյրիս հետ զինն Հայր Աիշանի իրմին վրայ:
Ներփակ մէկ ծաղիկն ալ վեց տարի առաջ Ա-
րագածի լանջերէն քաղեր եմ, այժմ կը խնդ-
դրեմ, որ այդ ծաղիկը զնեք Հայր Աիշանի

Գերեզմանին վրայ և թաղէք անոր ցուրտ հո-
ղին մէջ: Անոր սիրտը կը շերտանայ այդ ծա-
ղիկի ներկայութենէն: Զէ՞ որ այդ ծաղիկը
Հայաստանի օդն է ծծեր, ջուրն է խմեր, հողին
մէջն է ապրեր, այն հողը՝ որուն կարօտով մե-
ռաւ Հայր Աիշանը:

Հայր Սուրբ, խնդիր մ'ունիմ և յուսով եմ, որ
չի պիտի մերժէք. յաջորդ նամակը երբ կը գրէք,
Հայր Աիշանի գերեզմանի հողէն քիչ մը լեցու-
ցէք մահու ծրարի մը մէջ և գրէք Ձեր նամակին
ծոցը շատ քիչ քարով, որ ծանրութիւն չըլլայ
և ուղարկեցէք ինձ »:...

ԼԱՅԵՐԿԻ ՀԱՏ ԳԱՂԻԹԵՐ ԵՒ ԲՐՈՑ. ՅՐ. Բ. ԲՈՒՆ-
ԳԱՆ. — Գերման գիտնական Բաուլ Ռոհրպալկ հան-
րածանքով գէմք մըն է միջազգային աշօղ, իսկ

հայուն համար նաև անկեղծ բարեկամ մը։ Զանգուցեալ Տր. Յովհ. Լեբսիուսի կողքին Ռոհրպախ անձնաւորութիւնն էր նրկեակ զինակցութեան՝ սուտին և կաշառուած «գիտնական»ներուն դէմ։ Հիմայ չկայ Լեբսիուս, թէ և կ'ապրին իր հայաւ սէր ու հայանպաստ կազմակերպութիւնները։ Ու Տր. Ռոհրպախ մինակը կը պաշտպանէ ճակաւ տը ստորին յարձակումներու դէմ, որոնք գեռ մինչև այսօր տեղի կ'ունենան հայ ազգին դէմ։ Սակայն որքան ալ հայասէր ըլլայ մարդ, չի կրնար այս նիւթական աշխարհին մէջ առանց հայ կազմակերպութիւններու բարոյական ունիւ-

զրեցի յարգելի բրոֆէտորէն ճառին ձեռագիրը ինքի փոխ տալ, որպէս զի թարգմանաբար տամ ընթերցողներուս՝ ամփոփումը։

Ահա ճառը, իր ընդհանուր գիծերուն մէջ.

Ռոհրպախ, դեռ Հայաստան չճամբորդած, ծանօթացած է ազնիւ ու ազգասէր Հայերու հետ, որոնք իրեն հետ Պերլին աստուածաբաւ նութիւն ուսած են։ Յիշեց թաւրիզի նախկին առաջնորդ Կարապետ Եպիսկ.ը (Տէր-Մկրտիչեան), որ զինքը 1893ին Էջմիածին հրաւիրած էր։ Օրուան մեծ Կաթողիկոսը, Խրիմեան Հայրիկ, օրհնած է Ռոհրպախն ու իր կիներ։



Յրոֆ. Տր. Ռ. Ռոհրպախ

թական աշակցութեան մեծ յաղթանակներ տաւ։ Դոյն իսկ կ'ըսեմ, թէ նախադրականները պէտք է ըլլանք մենք, Հայերս, գիտնալով օգտուիլ մեզի կողմակից նշանաւոր անձնաւորութիւններուն բարեացակամութենէն։

Ուրեմն այս դերը առաւ Լայբցիկի հայ գաղութն ալ, որ տեսնելով, թէ հայութեան հասցէին ազոտո մուրեր կը քսուին և մթնոլորտը կը խանգարեն, որոշեց Յրոֆ. Ռոհրպախը հրաւիրել՝ խօսելու համար Լայբցիկի և ամբողջ Արևելի Գերմանիոյ անթիւ հեռանձայնին մէջ (Բատիոյ)։ Ռոհրպախ, որ անցեալ տարի աշխարհ կորուով Մ. հաւանգնեալու մէջ հայ քաղաքացիական դատին առթիւ պաշտպան հանդիսացաւ իր վկայութեամբը հայ ազգին, այնպէս ալ անցեալ օրուան իր բանախօսութեան մէջ, ուղղուած հարկեր հազարէ աւելի ունկեղիրներու, ցոյց տուաւ, որ գիտէ մասը ճիշդ վերջին վրայ դնել ու ծախուած բերանները լռեցնել։ Որպէս զի «Բազմապէս» ի ընթերցողներուն կարենամ բանախօսութեան ճիշդ ամփոփումը տալ, խըն-

Այն ատենուան Ապտուլ Համիտեան ջարդերը մինչև Եւրոպա ձայն տուած էին։ Ռոհրպախ կը հաղորդէ Քիւրտ աւազակապետի մը հետ իր ունեցած տեսակցութեան արդիւնքը, որպէս կ'իմանաւք, թէ վրանին մէջ գտնուող բոլոր հարստութիւնը կողոպտուած ու ջարդուած անմեղ Հայերուն ինչքն է եղած։

Թէ ինչու Հայ ազգը, ամենէն տառապածը աշխարհի մէջ, չկրցաւ իր բոլոր երազներուն հասնիլ, ինչպէս Յոյները, Ռումանացիները, Սեփալներ ու Պուլկարները։ Տր. Ռոհրպախ կրեք կէտերու կը դասաւորէ Հայոց դժբախտութիւնը. ա) ժողովուրդին անխորհակելի սէրը դէպի իր ազգայնութիւնը, բ) Մակուսթայի բարձր կաթողութիւնը և մանաւանդ, գ) Երկրին Եւրոպայէ շատ հեռու գտնուիլը։

Գալով այն զրպարտութեան, թէ Հայերը ընդհանուր առմամբ վաշխառու և մարդ խաբող առեւտրականներ են, Տր. Բատու Ռոհրպախ բացարձակապէս հերքեց խտրիկ և ծիծաղելի և անբան գտաւ այդ ախմար թնճը պաշտպանող-

ները: Զէ՛ որ Հայ ժողովուրդին կէսէն աւելին
գիւղացի էր և է: Ու եթէ հոս ու հոն քանի մը
Հայեր գտնուեր են, որոնք գէշ անուն են հա-
նած, ասիկա դէպք մըն է, որու կարելի է հան-
դիպիլ բոլոր ազգերու մօտ:

Ընդհանուր պատերազմի փոքր-ասիական մեծ
ողբերգութեան զալով, յարգելի բանախօսը իր

բոլոր ուժովը շեշտեց ողբերգութեան ճշմար-
թեան վրայ. « Հէքեաթ չէ՛ որ կը պատմեմ ձե-
այլ անկողնով ապացուցուած իրողութիւնն
... Բրոֆ. Տր. Բաուլ Ռոհրպախի այս բա-
խօսութիւնը խոր ազգեցութիւն ձգած է գեր-
ունկնդիրներուն վրայ. — (ՅԱՆՈՐ ԳՐԻԳՈՐ):



Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ 1927




Տար. Բաժնեգին՝ ՇԵՂԵՆ -12 — ՏՈՒՄ 3

Խմբագրութիւնս պարտք կը զգայ Հաղորդել Բզմ.ի Յա-
գելի Բաժանորդաց.


Նկատելով գաղղիական ֆրանքի յարափոփոխ և անկե-
վիճակը և ներկայ առաքման և այլ տպագրական նորան-
ծախուց յաւելումները Բզմ.ի Համար ստեղծուած տնտեսակ-
կացութեան Հանդէպ՝ կը ստիպուինք յառաջիկայ 1927-ին Հ
մար որոշապէս Բազմավեպի Բաժնեգին սահմանել ՇԵՂԵՆ 1
ՏՈՒՄ 3:

Արդ կը խնդրուի մեր Պատ. Բաժանորդներէն նկատ-
ղութեան առնել այս յայտարարութիւնը և ըստ այնմ կատ-
րել 1927 տարւոյ Բաժնեգիներու առաքումները:

ԴՄԲ. ԲԱՋՄԱՎԷՊԻ



Կ Ա Ր Ե Ի Ո Ր



1. Խմբագրութիւնս կրկին կը խնդրէ այն Բաժանորդներէն, որոնք ցա-
յտնեալ Հաշիւներ ունին և կամ չեն վճարած դեռ իրենց Բաժնեգիները,
փութացնելու անոնց կարգադրութիւնը: